

ՄԵԳԻՆՈՒՏԱՆԻ ՏԿՈՒՄԵՆԻ ԵՎ ԴՆԵՐԻՆԻ ՏԿՈՒՄԵՆԻ

Ստեփան Եվ Մարգարիտա Եվ Մարգարիտա





ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ



ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԸ

Գրքույկ՝ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար

ԼԻԼԻԹ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Աշխատանքը կատարվել է ՀՀ ՆԳՆ «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի Բնակչության հետ տարվող աշխատանքների վարչությունում և տպագրության է երաշխավորվել ՀՀ ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության գիտատեխնիկական խորհրդի կողմից:
Նպատակն է՝ բարձրացնել նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների՝ երկրաշարժին դիմակայելու գիտելիքների մակարդակը:

ԵՐԵՎԱՆ 2025


ՏՐՎՈՄ Է ԱՆՎՃԱՐ

ԱՌԱՋԱԲԱՆ

Սիրելի՛ երեխաներ, այս գրքույկի մեջ ներկայացված են երկրաշարժից պաշտպանվելու վարքականոնները՝ գծանկարների տեսքով, որոնք գունազարդելով դուք կարող եք սովորել ճիշտ վարքի ձևերը:




Հարգելի՛ ծնողներ, եթե ձեր երեխան դեռ չգիտի կարդալ, ապա օգնե՛ք նրան: Կարդացե՛ք նրա համար երկրաշարժից պաշտպանվելու վարքի կանոնները. այդ ընթացքում նա կգունազարդի և ավելի արագ կյուրացնի այդ կանոնները:





ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԿԵԼ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ







ԳՈՒՆԱՎՈՐԻՐ,

ՍՈՎՈՐԻՐ,

ՊԱՇՏՊԱՆՎԻՐ



Սիրելի՛ երեխաներ, ձեր ընտանիքի անդամների հետ նախապես պայմանավորվե՛ք, թե որտե՛ղ եք հանդիպելու ուժեղ երկրաշարժից հետո, եթե երկրաշարժի ժամանակ գտնվում եք տարբեր վայրերում:




Ուստի խումբից խուսափելու համար, երկրաշարժից հետո գնացե՛ք նախօրոք պայմանավորված ազատ և անվտանգ վայր, որպեսզի իրար չկորցնեք:



Ծնողներին խնդրե՛ք, որ ցույց տան ձեզ տան ամենաանվտանգ տեղերը՝ ներքին կրող պատերը, դրանցում առկա դռան բացվածքները և հիմնասյուները:

Հիշե՛ք 112 և 911 հեռախոսահամարները



ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԻՐԵՐՈՎ ՊԱՅՈՒՍԱԿ


Երկրաշարժի ժամանակ ձեզ անհրաժեշտ կլինի առաջին անհրաժեշտության իրերով պայուսակ, ուստի ձեր ծնողներին խնդրե՛ք, որպեսզի նախապես պատրաստեն և բնակարանի ելքի մոտ պահեն այն: Պայուսակի մեջ պետք է լինեն՝ առաջին բուժօգնության դեղարկղիկ, կարևոր փաստաթղթեր կամ դրանց պատճենները, մարտկոցով ռադիոընդունիչ, գրպանի լապտեր, սուլիչ, խմելու ջուր, պահածոյացված սնունդ, տաք հագուստ, հիգիենայի պարագաներ և ձեր սիրելի խաղալիքներից որևէ մեկը:






Խնդրե՛ք ծնողներին, որպեսզի մահճակալները տեղադրեն պատուհաններից հեռու՝ ներքին կրող պատի մոտ: Չի՛ կարելի մահճակալի վերևում կախել գրադարակներ, ծանր շրջանակներով նկարներ և այլ իրեր:

Ձեր ծնողներին խնդրե՛ք, որպեսզի ծանր սարքերը,
կահույքն ամրացնեն հատակին կամ պատերին:




Անհրաժեշտ է հուսալիորեն
ամրացնել նաև ծանր ջահերն
ու նկարները:





Հիշեցրե՛ք ծնողներին, որ բնակարանում չկատարեն ապօրինի
ձևափոխություններ:



Շենքեր կառուցելիս հիմքը հնարավորինս պետք է ամուր լինի, իսկ պատերը՝ հուսալիորեն ամրացված հիմքին:

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԺԱՄԱՆԱԿ




ԽՈՒՃԱՊԻ ՉՄԱՏՆՎԵ՛Ք



Հեռու մնացեք
թափվող բեկորներից,
ծանր առարկաներից,
ապակուց և այլ
թափվող իրերից:


Եթե գտնվում եք շենքի նկուղային, առաջին և երկրորդ հարկերում, արագ դու՛րս եկեք շենքից:






Հեռացե՛ք դեպի ազատ,
բաց տարածություն՝
զգուշանալով շենքի
փլուզվող բեկորներից:

Վերին հարկերում գտնվելիս կանգնե՛ք բնակարանի անվտանգ տեղերում՝
գլխավերևում պահելով աթոռ, պայուսակ կամ այլ իր՝ վերևից թափվող
ծեփակտորներից և առարկաներից պաշտպանվելու համար,



Կամ էլ մտե՛ք անվտանգ տեղում գտնվող սեղանի կամ մահճակալի տակ:





ՎԱՋԵՔ

ՄՏԵՔ ՍԵՂԱՆԻ ՏԱԿ



ՁԵՌՔԵՐՈՎ ԱՄՈՒՐ
ԲՈՆԵՔ ՍԵՂԱՆԻ
ՈՏՔԵՐԻՑ




Եթե երկրաշարժի ժամանակ գտնվում եք բակում, հեռացե՛ք
էլեկտրահաղորդալարերից, սյուներից և մանկական ճոճանակներից:



Կանգնե՛ք
անվտանգ, բաց
տարածությունում:





Եթե երկրաշարժի ժամանակ գտնվում եք ընթացող տրանսպորտում, խնդրե՛ք վարորդին արգելակել մեքենան շենքերից և կամուրջներից հեռու՝ բաց տարածությունում:


Երկրաշարժի ժամանակ մնացե՛ք մեքենայի մեջ, մինչև ցնցումների ավարտը:



Եթե երկրաշարժի ժամանակ գտնվում եք մետրոյում.



ապա մի ձեռքով ամուր բռնե՛ք ձողից, մյուս ձեռքով պաշտպանե՛ք ձեր գլուխը.



Մետրոյի գնացքի մեջ գտնվելու ժամանակ դեպի ելք մի՛ վազեք, իրար մի՛ հրեք, մի՛ բղավեք:



Մետրոյի կայարանում լսե՛ք և կատարե՛ք բարձրախոսով տրվող հրահանգները:

Եթե երկրաշարժի ժամանակ դրսում եք, երբեք չենք չմտնեք, դա շատ վտանգավոր է:





Երկրաշարժի ժամանակ մի՛ բարձրացեք տանիք, դա շատ վտանգավոր է:



մի՛ օգտվեք վերելակից.




Երկրաշարժի ժամանակ վտանգավոր են նաև աստիճանավանդակները: 33




Եթե գիշերը արթնացել եք երկրաշարժից՝ ոչ մի դեպքում մի՛ օգտվեք
էլեկտրական անջատիչից, կրակայրիչից. օգտվե՛ք միայն բջջային հեռախոսի
կամ գրպանի լապտերից:

Ձեր ծնողներին հիշեցրե՛ք, որ երկրաշարժի մասին լսեն միայն պաշտոնական հաղորդագրություն՝ ռադիոյով կամ հեռուստատեսությամբ:




ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՀԵՏՈ






Եթե փլատակների տակ եք, բղավե՛ք, կա՛յ հաստատեք դրսում գտնվողների հետ,



Եթե փլատակների տակ եք, մի՛ հուսահատվեք.
փրկարարները ձեզ կգտնեն և կփրկեն:



Եթե երկրաշարժից
հետո շենքը չի վնասվել
կամ քիչ է վնասվել,
զգույշ եղեք շենք
մտնելիս: Ծնողներին
խնդրե՛ք, որ ուշադիր
գնեն բնակարանը.
արդյոք չե՞ն թափվել
վտանգավոր հեղուկներ:



Երկրաշարժից հետո հեռախոսից օգտվե՛ք միայն խիստ անհրաժեշտության դեպքում:





ՎԵՐՋԱԲԱՆ

Սիրելի՛ երեխաներ, հուսով եմ, որ
գունազարդելու միջոցով դուք յուրացրեցիք
երկրաշարժից պաշտպանվելու
վարքականոնները և անհրաժեշտության
դեպքում կկարողանաք ճիշտ կիրառել:



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կ. Ա. Դանիելյան, Հ. Վ. Մարտիրոսյան «Ինչպես պաշտպանվել երկրաշարժից» հանրամատչելի գրքույկ դպրոցականների համար, Երևան, 1999թ.:
2. ChatGPT
3. **և այլ կայքերից**

Գրքույկը կազմեց ԲՏԱՎ-ի մեթոդական բաժնի պետ՝ Լիլիթ Ստեփանյանը

Շնորհակալությունս եմ հայտնում ՀՀ ՆԳՆ «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Սոս Մարգարյանին, ՀՀ ԱԻՆ աշխատակազմի «ՍՊՏԾ» գործակալության գիտատեխնիկական խորհրդի անդամներին և Բնակչության հետ տարվող աշխատանքների վարչության աշխատակիցներին /նաև Հյուսիսային և Հարավային տարածաշրջանային կենտրոնների ԲՏԱԲ-ների աշխատակիցներին/ աջակցելու համար:

ՀՀ ՆԳՆ «ՍՊՏԾ» ՊՈԱԿ-ի կոնտակտային տվյալներ՝
Պաշտոնական կայք՝ nssp.am

Բնակչության հետ տարվող աշխատանքների վարչության կոնտակտային տվյալներ՝
Հեռախոսահամարներ՝ 060372230, 060372275, 060372245
Էլ. Հասցե՝ nsspbtav@gmail.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	3
Ինչպես նախապատրաստվել երկրաշարժին	4
Ինչպես վարվել ցնցումների ժամանակ	16
Ինչպես վարվել ցնցումներից հետո	36
Վերջաբան	41
Օգտագործված գրականություն	42

ՆԵՐԿԻՐ
ԻՆՔՂ